

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՎԱՐԱՋԴԱՏՅԱՆ ՏԱՐՈՆ ՍԻՐԱԿԻ**

**«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ  
ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ»**

**Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և  
կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2016**

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Միքայել Վարազդատի Միքայելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Էդուարդ Համբարձումի Օրդյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Կառլեն Գագիկի Խաչատրյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական  
(Սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հունիսի 3-ին, ժամը 13:30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0009, Երևան, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. մայիսի 2-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
տեխնիկական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր՝



Ա. Ա. Առաքելյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ալբենախոսության թեմայի արդիականությունը:** Շուկայական տնտեսական համակարգ որդեգրած յուրաքանչյուր պետության գլխավոր նպատակներից է տնտեսական մրցակցության՝ որպես մակրո և միկրո միջավայրերի կայունության հիմնական հենասյան ապահովումը, որն իրականացվում է պետության կողմից վարվող միասնական տնտեսական քաղաքականության միջոցով: Վերջինս բովանդակում է մրցակցության, ինչպես նաև հակամենաշնորհային կարգավորման ճկուն մեխանիզմների կիրառում, որոնք հնարավորություն են ընձեռում ապահովել առողջ ձեռնարկատիրական միջավայր:

Գլոբալիզացիայի պայմաններում, երբ տարբեր երկրների գերխոշոր կազմակերպությունները ստեղծում են վերազգային կորպորացիաներ, և որոնց առևտրատնտեսական շահերը բախվում են անդրազգային տարածքներում, մրցակցային հարաբերությունների կարգավորումը նման պայմաններում կրում է հրամայական անհրաժեշտության բնույթ:

Մեր երկրում մրցակցության և մենաշնորհների կարգավորումը դարձավ ժամանակի պահանջ՝ սկսած այն պահից, երբ Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես անդամակցեց Եվրասիական տնտեսական միությանը՝ դառնալով լիիրավ անդամ: Թվով 5 պետություններ, ընդգրկվելով միասնական տնտեսական տարածքում, ստեղծեցին միջերկրյա ազատ առևտրային գոտիներ: Միացմամբ պայմանավորված՝ հատուկ կարևորություն տրվեց նաև պետական գնումներին, որոնց մասով անդամ երկրների տնտեսվարող սուբյեկտներին հնարավորություն ընձեռվեց մասնակցել անդամ մյուս երկրների պետական գնումների մրցույթներին՝ առանց լրացուցիչ վարչական արգելքների: Դա վկայակոչում է այն հանգամանքը, որ կարգավորող մարմինը պետք է էլ ավելի հետևողական քաղաքականություն վարի մրցակցային դաշտի կարգավորման ուղղությամբ՝ արտաքին ազդակներից ստացվելիք հնարավոր բացասական ռիսկերն ապահովագրելու նկատառումով:

Ներկայումս, մրցակցային միջավայրի կարգավորման համատեքստում առավել արդիական է դարձել ոչ միայն մրցակցության բնականոն գործընթացը խոչընդոտողների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառումը, այլև հակամենաշնորհային կարգավորման այնպիսի գործիքների և անհրաժեշտ այն տեղեկատվության բացահայտումը, որոնց միջոցով հնարավոր է կանխակալ ազդել տնտեսվարող սուբյեկտների վարքագծի կամ հակամրցակցային գործողությունների շրջանառելիության վրա: Մեր երկրում ապրանքային շուկաների (այդ թվում՝ ռազմավարական նշանակության) մեծամասնությունն աչքի է ընկնում համակենտրոնացման բարձր աստիճանով: Որոշ ապրանքային շուկաներ վերահսկվում են մեկ տնտեսվարող սուբյեկտի (այդ թվում՝ անձանց խմբի)

կողմից: Շուկայական իշխանությամբ օժտված սուբյեկտների կողմից հաճախակի կատարած խախտումներին համարժեք պատասխանատվության միջոցներ չսահմանելը կամ խտրական կերպով սահմանելն ու կիրառելը ստեղծում են անպատժելիության մթնոլորտ, ինչից օգտվելով՝ գերիշխող դիրք զբաղեցնող կազմակերպությունները հայտնվում են նպաստավոր դիրքում՝ ստեղծելով անհավասար մրցակցային պայմաններ բարեխիղճ տնտեսվարողների համար: Ատենախոսությունում հատուկ անդրադարձ է կատարվել օրենսդրական կարգավորման բացթողումներին, երկիմաստություններին, իրավական ակտերում կիրառվող հասկացությունների թերարժեք ներկայացման հստակեցմանը:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ երբեմն մրցակցությունը և մենաշնորհները կարգավորող մարմինն ի գորու չի լինում միանձնյա բացահայտել և կանխել տնտեսվարող սուբյեկտների բոլոր հակամրցակցային գործողությունները: Այս առիթով, կարգավորող մարմինն ու պետական լիազոր այլ մարմինները մտնում են ակտիվ համագործակցության գոտի՝ պարբերաբար երկկողմ փոխանակելով անհրաժեշտ տեղեկատվություն տնտեսվարող սուբյեկտների գործունեության և վարքագծի վերաբերյալ: Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում կառուցողական համագործակցության նման համակարգ ներդրված չէ, իսկ եզակի կառույցների հետ ոչ բավարար տեղեկատվության փոխանակման միջոցով ոլորտը հսկելու ջանքերն իրենց արդյունքները դեռևս չեն տվել: Ատենախոսությունում ներկայացված են համագործակցության այն ուղիները, որոնց հաշվի առնելն ու հետևողական կիրառելը մրցակցային հարաբերությունների կարգավորումը նշանակալիորեն կթևակոխեն դեպի նոր արգասիքներով լի հարթակ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վերը ներկայացված հիմնախնդիրների առկայությամբ, որոնց լուծման ուղղությամբ անհրաժեշտ է գիտականորեն հիմնավորված վերլուծություն՝ օժտված գործնականում կիրառելու նպատակահարմարությամբ:

**Ատենախոսության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակն է հետազոտել Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման առկա հիմնախնդիրները և մշակել դրանց լուծմանն ուղղված առաջարկներ: Ներկայացված նպատակի իրագործման համար ատենախոսությունում վեր են հանվել և լուծվել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են.

- «Տնտեսական մրցակցություն» և «Մենաշնորհ» հասկացությունների տեսական հայեցակարգերի էվոլյուցիայի ներկայացումը,
- Մրցակցության և մենաշնորհների կարգավորման անհրաժեշտության հիմնավորումը,

- Տնտեսական մրցակցության և մենաշնորհների (այդ թվում՝ բնական) պետական կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրությունն ու համեմատականների անցկացումը,
- Տնտեսական մրցակցության պաշտպանության արդի վիճակի գնահատումը Հայաստանի Հանրապետությունում,
- Բնական մենաշնորհների կարգավորման հիմնախնդիրների բացահայտումը Հայաստանի Հանրապետությունում,
- Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող օրենսդրության բացթողումների բացահայտումը և դրանց վերացման վերաբերյալ առաջարկությունների մշակումը,
- Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում շահագրգիռ պետական մարմինների միջև համագործակցության, ինչպես նաև մենաշնորհների պետական վերահսկողության մեխանիզմների մշակումը:

**Արենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:**

Արենախոսության ուսումնասիրության օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանության համակարգն է, իսկ առարկան՝ մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորմանն ուղղված համալիր միջոցառումները:

**Արենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:**

Հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել տնտեսագիտության տարբեր դպրոցների ներկայացուցիչների, ինչպես նաև հայ հետազոտողների աշխատությունները: Արենախոսությունում կիրառվել են ինչպես արտերկրյա տնտեսագետների, այնպես էլ իրավաբանների առանձին մեկնաբանություններ ու հիմնավորումներ:

Հետազոտության համար տեղեկատվական հենք են ծառայել Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան մի շարք երկրների Սահմանադրությունները, մրցակցության և բնական մենաշնորհների ոլորտները կարգավորող օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության, վերահսկիչ պալատի խորհրդի, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշումները և այլ իրավական ակտերը: Որպես տեղեկատվավերլուծական աղբյուրներ հանդես են եկել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի տարեկան գործունեության ծրագրերը, տարեկան գործունեության հաշվետվությունները, Համաշխարհային բանկի կողմից հրապարակված «Հայաստանի Հանրապետություն. Կուտակում, մրցակցություն և միակցելիություն» զեկույցը և այլք:

Արենախոսությունում օգտագործվել են գիտական վերացարկման, վերլուծության, համադրության, համալիր-համակարգային, վիճակագրության, այլ հավասար պայմանների, վարկածի և այլ մեթոդներ:

**Արենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորույթը:**

Արենախոսության հիմնական արդյունքները, որոնք հավակնում են գիտական նորույթի, շարադրված են ստորև.

1. Հստակեցվել է տնտեսվարող սուբյեկտների կողմից իրավախախտման դեպքում պատասխանատվության միջոց կիրառելու ձևը՝ տուգանք կամ նախազգուշացում, որի հիման վրա առաջարկվել է ներդնել իրավախախտումների համար տուգանքների կիրառման միասնական համակարգ՝ տարբերակելով ֆիզիկական և իրավաբանական անձանց:
2. Առաջարկվել է պետական օժանդակության վերաբերյալ կարգի նախագիծ, որը սահմանում է պետական օժանդակության տրամադրման հստակ նպատակները, պետական օժանդակության տրամադրումը նախաձեռնող մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման և վերջինիս կողմից դրա ուսումնասիրման արդյունքների վերաբերյալ համաձայնություն տալու պայմանները:
3. Մշակվել է մրցակցության պաշտպանությունը կարգավորող պետական մարմնի և շահագրգիռ այլ պետական մարմինների միջև համագործակցության մեխանիզմ:
4. Հիմնավորվել է բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման համար հիմք հանդիսացող տարրերի նորմավորման անհրաժեշտությունը, և այդ նպատակով առաջարկվել է նորմավորման համապատասխան մեխանիզմ:
5. Մշակվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ավելի քան 20 հոդված պարունակող օրենքի նախագիծ: Առաջարկվել են նաև այլ իրավական ակտերի ընդունման, ինչպես նաև գործող ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծեր:

**Արենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:**

Արենախոսության արդյունքները քննարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Հանրային կառավարման ամբիոնում: Արենախոսությունում արտացոլված առանձին դրույթների վերաբերյալ հեղինակը հանդես է եկել զեկուցումներով՝ «Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր» խորագրով ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 2-րդ գիտաժողովին (Երևան, Երևանի պետական համալսարան, 20-23 փետրվարի 2014 թ.), «Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով միջբուհական գիտաժողովին (Երևան, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 27-28 մարտի 2014 թ.),

Եվրոպական Տարածաշրջանային Ակադեմիայի հիմնադրման 13 ամյակին նվիրված երիտասարդ գիտնականների հանրապետական միջբուհական գիտաժողովին (Երևան, Եվրոպական Տարածաշրջանային Ակադեմիա, 29 հոկտեմբերի 2014 թ.) և «Զարգացման ժամանակակից մարտահրավերներ» խորագրով ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովին (Երևան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, 29-31 հոկտեմբերի 2014 թ.):

Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթներն ամփոփվել են հեղինակի կողմից հրատարակված թվով 7 (յոթ) գիտական հոդվածներում.

1. Տ. Վարազդատյան, «Մենաշնորհ ցածր գները և դրանց կանխման անհրաժեշտությունը ՀՀ-ում», «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես # 11-12 (161-162) նոյեմբեր-դեկտեմբեր 2013, էջ 49-52,
2. Տ. Վարազդատյան, «Մենաշնորհների պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում», Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր: Ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային 2-րդ գիտաժողովի նյութեր: - Եր.: ԵՊՀ ԵԳՄ, 2014, էջ 120-125,
3. Տ. Վարազդատյան, «Հակամրցակցային համաձայնությունները ՀՀ պետական գնումների համակարգում», «Հանրային կառավարում» գիտական հանդես (Հատուկ թողարկում) 3-4/2014: Պետական կառավարման արդյունավետության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Միջբուհական գիտաժողովի (27-28 մարտի 2014 թ.) նյութերի ժողովածու, Մաս 1 / ՀՀՊԿԱ: - Երևան: «Պետական ծառայություն», 2014, էջ 56-64,
4. Տ. Վարազդատյան, «Անբարեխիղճ մրցակցությունը որպես ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտ», Զարգացման ժամանակակից մարտահրավերներ, ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի (2014 թ. հոկտեմբերի 29-31) նյութեր, I / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2015, էջ 741-746,
5. Տ. Վարազդատյան, «Բնական մենաշնորհների դրսևորումները ՀՀ-ում», Եվրոպական ակադեմիա: Գիտ. հոդվածների ժլվ. / ԵՏԱ. - Եր.: «ԵՏԱ» հրատ., 2015: Գիրք 6, էջ 131-136,
6. Տ. Վարազդատյան, «Տնտեսական մրցակցության պաշտպանության և մենաշնորհների պետական կարգավորման բարելավման ուղիները ՀՀ-ում», «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, 2015 # 4, Հոկտեմբեր - Դեկտեմբեր, 2015 թ., էջ 381-395,
7. Տ. Վարազդատյան, «ՀՀ պետական մարմինների համագործակցության ուղիները մրցակցության պաշտպանության բնագավառում», «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, 2015 # 4, Հոկտեմբեր - Դեկտեմբեր, 2015 թ., էջ 455-462:

**Արենախոսության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:** Արենախոսությունում կատարված վերլուծությունները և ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նման հետազոտություն իրականացնող գիտաշխատողների, ասպիրանտների և մագիստրանտների, ինչպես նաև տնտեսական մրցակցությունը պաշտպանող և տնտեսական քաղաքականություն մշակող պետական մարմինների համար: Արենախոսությունում ներկայացված առաջարկները կարող են օգտագործվել տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կատարելագործման ժամանակ, ինչպես նաև մրցակցության պաշտպանության բնագավառում պետական մարմինների միջև համագործակցության ուղիներն ընդգծելիս:

**Արենախոսության կազմը և ծավալը:** Արենախոսությունը կազմված է ներածությունից, 3 (երեք) գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և 6 (վեց) հավելվածից: Արենախոսությունը պարունակում է 5 (հինգ) աղյուսակ և 3 (երեք) գծապատկեր: Արենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 184 էջ, որից հավելվածները՝ 29 էջ:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Արենախոսության «**Ներածությունում**» հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են ատենախոսության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, ատենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորոյթը, արդյունքների փորձարկումն ու հրապարակումները և տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև ատենախոսության կազմը և ծավալը:

Արենախոսության առաջին «**Տնտեսական մրցակցության և մենաշնորհների տեսական հիմքերը և պետական կարգավորման միջազգային փորձը**» գլխում ներկայացված է «Տնտեսական մրցակցություն» և «Մենաշնորհ» հասկացությունների տնտեսագիտական բովանդակությունը, տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման անհրաժեշտությունը և միջազգային փորձը:

Մրցակցության վերաբերյալ տեսական ասպեկտներ սկսեցին ձևավորվել միայն 18-րդ դարի կեսերին: Մրցակցության վերաբերյալ գոյություն ունեցող տեսական հիմնավորումները տրվել են **դասական քաղաքատնտեսությունում**<sup>1</sup>: Ադամ Սմիթն առաջինն էր, ով ապացուցեց, որ մրցակցությունը,

<sup>1</sup> Азов Г.Л., Челенков А.П. Конкурентные преимущества фирмы. – М.: ОАО «Типография «НОВОСТИ», 2000, стр. 17



հավասարեցնելով շահույթի նորման, հանգեցնում է կապիտալի և աշխատուժի օպտիմալ բաշխման<sup>2</sup>:

Ադամ Սմիթը սահմանեց մրցակցության գործելու 5 հիմնական պայմանները<sup>3</sup>.

- մրցակիցները պետք է գործեն անկախ և ոչ թե համաձայնեցված,
- մրցակիցների (առկա կամ հնարավոր) թիվը պետք է լինի բավարար՝ արտասովոր եկամուտները բացառելու նպատակով,
- տնտեսվարող սուբյեկտները պետք է տիրապետեն շուկայական հնարավորությունների մասին ընդունելի գիտելիքներին,
- պետք է լինի այդ գիտելիքներին համապատասխան գործելու ազատություն,
- անհրաժեշտ է սպասել որոշ ժամանակ, որպեսզի ռեսուրսների հոսքի ուղղվածությունն ու ծավալը համապատասխանեն սեփականատերերի ցանկություններին:

Մրցակցությունը պետք է հավասարեցնի մասնավոր շահերը և տնտեսական արդյունավետությունը: Այս տեսանկյունից Սմիթը մրցակցությունը նույնացնում է շուկայի «անտեսանելի ձեռքի»՝ մրցակցային ուժերի ազդեցության ներքո ձևավորվող շուկայական գների հետ: Նրա կարծիքով, մրցակցությունն իրենից ներկայացնում է երկարաժամկետ հեռանկարում շուկայում վերահսկողություն սահմանելու վաճառողների փոխկապակցված փորձերի ամբողջությունը: Այս միտումը շուկայում կլինի այնքան երկարատև, որքանով որ դա անհրաժեշտ է՝ ցածր շահույթ ապահովող ճյուղերից դեպի ավելի բարձր շահույթ ապահովող ճյուղեր ռեսուրսների տեղափոխման համար: *Հետևապես, մրցակցությունը նոր ուժերի և նոր հավասարակշռության հասնելու միջոցների փոխազդեցության գործընթաց է, որի էությունը մրցակիցների հարաբերական առավելություններ ունենալու պայքարն է:* Կատարյալ (զուտ) մրցակցության մոդելը, որի տեսական հիմնավորումները Սմիթն անհրաժեշտություն էր համարում, ամբողջովին բացառում էր շուկայական գործընթացների որևէ նպատակային վերահսկողություն<sup>4</sup>:

Մրցակցության միջոցով շուկայի գնային կարգավորման հետագա զարգացումները Դավիթ Ռիկարդոին հնարավորություն տվեցին կառուցել

<sup>2</sup> Антимонопольная политика в России: учеб. пособие для студентов вузов, обучающихся по специальности «Нац. экономика» / Князева. И.В. – М.: Омега-Л, 2006. – (Высшее экономическое образование), стр. 17

<sup>3</sup> Стиглер Дж. Дж. Совершенная конкуренция: исторический ракурс // Вехи экономической мысли. Теория потребительского поведения и спроса. Т. 1. Под ред. В. М. Гальперина. – СПб. Экономическая школа. 1999, стр. 301

<sup>4</sup> Smith A. An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations (New York: Modern Library edition, 1937), page 342

կատարյալ մրցակցության առավել ամբողջական տեսություն: Նա ուշադրությունը կենտրոնացրեց երկարաժամկետ հեռանկարում մոդելի ձևավորման վրա: Այդ մոտեցումը հնարավորություն տվեց խուսափել «մանրուքներից»՝ կապված պետական կարգավորման, մենաշնորհի իշխանության, շուկայի աշխարհագրական առանձնահատկությունների և այլ գործոնների հետ, որոնք երկարաժամկետ հեռանկարում չեն կարող ունենալ վճռորոշ նշանակություն<sup>5</sup>:

Կատարյալ մրցակցության գաղափարը թույլ տվեց հասկանալ, թե ինչպիսի դեպքերում «բնական» գները երկարաժամկետ հավասարակշիռ վիճակում կզուգակցվեն ապակենտրոնացված կառավարման սկզբունքներին և ինչպես վերջիններս կնպաստեն կապիտալիստական տնտեսության զարգացմանը: Զ. Ս. Միլլը ձևակերպեց այս հասկացությունն ավելի կանոնակարգված: Նրա կողմից մշակվեց միջազգային պահանջարկի հավասարումը, շուկայում առանձնացվեցին այսպես կոչված ոչ մրցակցային խմբերը, տրվեց պահանջարկի գնային առաձգականության եռաստիճան դասակարգումը, մշակվեց այլընտրանքային ծախսերի՝ մասշտաբից խնայողության հասկացությունը<sup>6</sup>:

**Ոչ դասական քաղաքատնտեսության դպրոցի** ներկայացուցիչներից Պ. Սրաֆֆն իր «Մրցակցության պայմաններում եկամուտների ստացման օրենքները» աշխատության մեջ կոնկրետ օրինակներով ցույց տվեց, որ արտադրության մասշտաբների ընդլայնման ազդեցության շնորհիվ խոշոր ձեռնարկությունները ստանում են լրացուցիչ հնարավորություններ, որոնք կարող են իրացնել միայն կատարյալ մրցակցության գործողության մեխանիզմը խախտելու և գնագոյացման վրա անմիջական ազդեցություն թողնելու միջոցով<sup>7</sup>:

Է. Չեմբերլինի աշխատություններում ամփոփվել են մենաշնորհային և ոչ գնային մրցակցության առաջացման պայմաններում գնագոյացման բնութագրման մասին քննարկումները: Ոչ դասական և դասական դպրոցների կողմից մենաշնորհների նկարագրման հիմնական անբավարարությունն այն էր, որ հետազոտություններում մեծ ուշադրություն էր հատկացվում երկարաժամկետ հավասարակաշռության պայմաններում գների համաձայնեցված դերին<sup>8</sup>: Է. Չեմբերլինը ցույց տվեց, որ ցանկացած մրցակից, ձգտելով շուկայում

<sup>5</sup> Рикардо Д. Начала политической экономии и налогового обложения: Сочинения. - М.: Государственное издательство политической литературы, 1955. 3-е издание. В 3 томах. Том 1, стр. 81-85

<sup>6</sup> Милль Дж. С. Основы политической экономии и некоторые аспекты их приложения к социальной философии / Под ред. О. И. Остроградского. – Киев-Харьков, 1848, стр. 213-218, стр. 389-403, стр. 808-831

<sup>7</sup> Сраффа П. Производство товаров посредством товаров / Под ред. И. И. Елисеевой. - М.: ЮНИТИ-ДАНА, 1999. (Университетская библиотека), стр. 137-156

<sup>8</sup> Чемберлин Э. Теория монополистической конкуренции: Учебное пособие. Пер. с англ. - М.: Экономика, 1996. (Экономическое наследие), стр. 118-122

առանձնանալ, ամենից առաջ փորձում է տարբերակել իր ապրանքը, որը հակված է իր համար ենթաշուկա ստեղծելուն, որում նա հանդես է գալիս որպես անհատ մենաշնորհ՝ կարգավորելով գները: Եվ առաջին անգամ մենաշնորհը և մրցակցությունը դիտարկվեցին ոչ թե հակադրություն, այլ երևան եկան «մենաշնորհ մրցակցություն» հասկացությամբ՝ չբացառելով մեկը մյուսին<sup>9</sup>:

Շուկայական տնտեսության պայմաններում մրցակցային քաղաքականությունը հանդիսանում է պետության տնտեսական քաղաքականության անբաժանելի մասը: Պետության մրցակցային քաղաքականությունը կոչված է նպաստելու շուկաներում մրցակցության զարգացմանը, խթանելու մրցակցային միջավայրի և մրցակցային մեխանիզմների ձևավորմանն ու զարգացմանը, ապահովելու հավասար մրցակցային պայմաններ: Պետության մրցակցային քաղաքականության նպատակներն են<sup>10</sup>.

- տնտեսական արդյունավետության հասնելը,
- հասարակության բարեկեցության բարձրացումը,
- տնտեսական զարգացումը, այդ թվում՝ կայուն տնտեսական աճի ապահովումը,
- մրցունակության բարձրացումը ներքին և արտաքին շուկաներում,
- երկրի համբավի և ներդրումային գրավչության բարձրացումը:

Պետության մրցակցային քաղաքականության միջոցառումները կարելի է դասակարգել 3 խմբի՝ 1. Խթանող (մրցակցության ձևավորման և զարգացման) միջոցառումներ, որոնց կարելի է վերագրել տարբեր հարկային արտոնությունները, վարկերի և արտոնյալ պայմաններով վարկավորման տրամադրումը, վարչական խոչընդոտների վերացումը, մրցակցային կառուցվածքի ձևավորման նպատակով ձեռնարկությունների ապախոչորացումը և այլն, 2. Սահմանափակող միջոցառումներ, որոնք հիմնականում հակամենաշնորհային մարմինների գործողություններն են՝ նպատակաուղղված տնտեսական համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելուն, 3. Մրցակցության պաշտպանության միջոցառումներ, որոնք ներառում են մրցակցության մասին օրենսդրական նորմերի խախտմանն ուղղված կանխարգելիչ գործողություններ, ինչպես նաև սահմանում այդ խախտումների համար պատասխանատվության միջոցներ<sup>11</sup>:

Մեկ այլ մոտեցմամբ, պետության հակամենաշնորհային քաղաքականությունն ամենից առաջ ուղղված է տնտեսվարող սուբյեկտների մենաշնորհ

<sup>9</sup> Նույն տեղում

<sup>10</sup> Якунин В.И., Сулакшин С.С., Фонарева Н.Е., Тотьев К.Ю. и др. Государственная конкурентная политика и стимулирование конкуренции в Российской Федерации. / Под общей редакцией Сулакшина С.С.: Монография в 2-х томах. Т. 1. М.: Научный эксперт, 2008, стр. 11-13


<sup>11</sup> Նույն տեղում, էջ 15

գործունեության կանխարգելմանը, ձեռնարկությունների կայուն և արդյունավետ աշխատանքին, շուկաների գործելու նորմալ պայմանների ձևավորմանը<sup>12</sup>:

Փոլ Սամուելսոնը նշել է, որ պետությունը զբաղվում է մրցակցության պաշտպանության ձևավորմամբ, զարգացմամբ, պահպանմամբ՝ իրականացնելով այն նույն «գործառույթները, որոնք մրցակցային մեխանիզմը չի կարողանում իրագործել կամ վատ է իրագործում»<sup>13</sup>:

Պետությունը պետք է հանդես գա որպես շուկայական հարաբերություններ կարգավորող, սահմանի «խաղի կանոնները» տնտեսական գործունեության գործընթացում և հետևի դրանց պահպանմանը՝ հանրային բարիքներ ստեղծելու և հանրային շահը պաշտպանելու նպատակով<sup>14</sup>:

Ի. Կնյազևան իր հետազոտությունների արդյունքում եկել է այն եզրահանգման, որ տնտեսագիտական և իրավագիտական տեսություններն ու պրակտիկան թույլ են տալիս առանձնացնել հակամենաշնորհային օրենքների միջոցով կարգավորվող 6 հիմնական օբյեկտներ (Գծապատկեր 1)<sup>15</sup>:



**Գծապատկեր 1**

**Տարբեր երկրներում հակամենաշնորհային օրենքներով կարգավորվող օբյեկտները**

<sup>12</sup> Игнатова С.М. О повышении экономической эффективности антимонопольной политики государства // Вестник Омского университета. 2003. Вып. 3, стр. 97

<sup>13</sup> Самуэльсон П. Экономика. Вводный курс.-М.: Экономика, 1964, стр. 670

<sup>14</sup> Писенко К.А., Цинделиани И.А., Бадмаев Б.Г., Правовое регулирование конкуренции и монополии в Российской Федерации: Курс лекций / Под ред. Запольского С.В. – М.: Российская академия правосудия; Статут, 2010, стр. 19

<sup>15</sup> Антимонопольная политика в России. / Князева И.В., նշված աշխ., էջ 115

Հակամենաշնորհային կարգավորման առաջին քայլերը կատարվեցին Հյուսիսային Ամերիկայում, երբ 1890 թ.-ին ԱՄՆ-ում ընդունվեց առաջին հակամենաշնորհային օրենքը՝ Շերմանի օրենքը: Մինչ դա, 1883 թ.-ին ընդունվել էր «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» Փարիզյան կոնվենցիան, որի համաձայն՝ անդամ երկրները պարտավորվում էին ապահովել իրենց երկրների քաղաքացիների արդյունավետ պաշտպանությունն անբարեխիղճ մրցակցությունից: «Մրցակցության յուրաքանչյուր գործողություն, որը հակասում էր արդյունաբերական և առևտրային գործունեության արդարության սովորույթներին, համարվում էր անբարեխիղճ մրցակցության գործողություն»<sup>16</sup>:

Շերմանի օրենքով արգելվում էին պայմանավորվածությունները, միավորումները և համաձայնությունները, որոնք ուղղված էին առևտրի սահմանափակմանը: Արգելվում էր նաև մենաշնորհացումը, դրան ուղղված փորձերը, մենաշնորհացման նպատակով միավորումները կամ համաձայնությունները նահանգների կամ օտարերկրյա պետությունների միջև առևտրի ցանկացած ոլորտում<sup>17</sup>: Շերմանի օրենքին հաջորդեց 1914 թ.-ին ընդունված Բլեյթոնի օրենքը (հետագայում որոշ հոդվածներ փոփոխվեցին և լրացվեցին՝ 1936 թ.-ին և 1950 թ.-ին), որը լրացրեց և կատարելագործեց Շերմանի օրենքը: Բլեյթոնի օրենքով արգելվում էր գնային խտրականությունն ու միաձուլումները, որոնք էականորեն նվազեցնում էին մրցակցությունը, ինչպես նաև արգելվում էր մրցակից ընկերությունների տնօրենների անհատական միավորումները<sup>18</sup>: Շերմանի օրենքի բացթողումն այն էր, որ օրենքում սահմանված չէր հակամենաշնորհային օրենսդրության խախտումների դիտարկման և դրանց հետամուտ լինելու նպատակով գործադիր իշխանության կազմում արդյունավետ ղեկավարող մարմնի մասին: 1914 թ.-ին ընդունվեց նաև Առևտրի Ֆեդերալ Հանձնաժողովի մասին օրենքը, որի հիմնական նպատակը մրցակցության անարդար մեթոդների արգելումն էր<sup>19</sup>:

1957 թ.-ին Հռոմում կնքված Եվրամիության պայմանագրով արգելվում էր ձեռնարկությունների միջև ցանկացած ձևի համաձայնությունը, ձեռնարկությունների միավորումների կողմից որոշումների ընդունումը և կարտելային փորձը, որոնք անհամատեղելի էին ընդհանուր շուկային և որոնք կարող էին ազդել անդամ-պետությունների միջև իրականացվող առևտրի վրա՝ նպատակ ունենալով կանխելու, սահմանափակելու կամ խախտելու մրցակցությունն ընդհանուր շուկայի ներսում<sup>20</sup>: Հռոմի պայմանագրով արգելվում էր նաև մեկ կամ

<sup>16</sup> Парижская конвенция по охране промышленной собственности, 20 марта 1883 года, Статья 10-bis, [http://www.wipo.int/treaties/ru/text.jsp?file\\_id=288517](http://www.wipo.int/treaties/ru/text.jsp?file_id=288517)

<sup>17</sup> The Sherman Antitrust Act: Approved by the U.S. Congress in 1890

<sup>18</sup> The Clayton Antitrust Act: Approved by the U.S. Congress in 1914

<sup>19</sup> The Federal Trade Commission Act: Established by the Federal Trade Commission (FTC) in 1914

<sup>20</sup> Договор, учреждающий Европейское Сообщество (Рим, 25 марта 1957 г.), Статья 81, <http://www.eulaw.ru/content/2001>

մի քանի ձեռնարկությունների կողմից գերիշխող դիրքի չարաշահումներն ընդհանուր շուկայում կամ նրա որևէ հատվածում, որոնք անահամատեղելի էին ընդհանուր շուկային այն չափով, որքանով դրանցից կարող էր տուժել անդամ-պետությունների միջև իրականացվող առևտուրը<sup>21</sup>:

Ատենախոսության երկրորդ «Տնտեսական մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման արդի վիճակը և հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ներկայացված է ՀՀ-ում տնտեսական մրցակցության և մենաշնորհների կարգավորման փորձը, առանձին-առանձին դիտարկված են կարգավորման (գերիշխող դիրքի, անբարեխիղճ մրցակցության, հակամրցակցային համաձայնությունների, տնտեսական համակենտրոնացումների և դրանց նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև պետական օժանդակության և բնական մենաշնորհների կարգավորման առանձնահատկությունները) ուղղությունները:

Հայաստանի Հանրապետությունում (հետայսու՝ ՀՀ) տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական կարգավորման առաջին նախադրյալներն օրենսդրական հարթություն դրվեցին միայն 2000 թվականի նոյեմբերի 6-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) ընդունմամբ<sup>22</sup>: Օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը ՀՀ-ում, իսկ կարգավորման առարկան՝ «Օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը»<sup>23</sup>: Մինչև Օրենքի ընդունումը՝ պետությունը երաշխավորում էր տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը՝ համաձայն ՀՀ Սահմանադրության<sup>24</sup>: 2005 թվականին ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելիս ամրագրվեց մրցակցության պաշտպանությունը խրախուսող ևս մեկ հոդված, համաձայն որի «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեու-

<sup>21</sup> Նույն տեղում, Հոդված 82

<sup>22</sup> «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2000.12.15/30(128)

<sup>23</sup> «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, Հոդված 1 և Հոդված 2

<sup>24</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995 թ., Հոդված 8

թյամբ զբաղվելու իրավունք: Շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են: Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար»<sup>25</sup>: Սահմանադրությամբ ամրագրված նշված նորմերը պահպանվել են նաև 2015 թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեի դրված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծում:

Օրենքի ընդունմամբ ձևավորվեց նաև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական մարմինը՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (հետայսու՝ Հանձնաժողով), որի անդամները նշանակվեցին ՀՀ Նախագահի կողմից 2001 թ. հունվարի 13-ին<sup>26</sup>: Ընդունման պահից ի վեր՝ Օրենքում ավելի քան 10 անգամ կատարվել են լրացումներ և փոփոխություններ, որոնցից հիմնականները երկուսն են<sup>27</sup>:

Օրենքում և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերում 2011 թվականին կատարված փոփոխությունները և լրացումները լիակատար չեն: Այս մասին իր մտահոգությունն է հայտնել Համաշխարհային բանկն իր կողմից հրապարակված զեկույցում: Այդ զեկույցում մասնավորապես նշվում է, որ նոր օրենսդրական դաշտը սահմանում է պետական պաշտոնյաների կողմից խտրականության դրսևորման և կողմնակալ պետական հովանավորչության դեմ պայքարի հստակ լիազորություններ<sup>28</sup>:

Զեկույցում կարևորություն է տրվում նաև Հանձնաժողովի և պետական կառույցների (այդ թվում՝ տնտեսության ոլորտները կարգավորողների) միջև համագործակցությանն ու ջանքերի համախմբմանը, ինչը կարող է շուկաներում մրցակցության բարելավման գրավական դառնալ: Օրինակ՝ Հանձնաժողովը տվյալ ոլորտի կարգավորիչի կամ պատասխանատու պետական մարմնի հետ համատեղ կարող է իրականացնել իրավական դաշտի վերլուծություն, որի արդյունքում հնարավոր կլինի իրականացնել մրցակցության խթանմանը միտված բարեփոխումներ կամ բարելավել կարգավորվող ծառայությունների որակը: Միաժամանակ՝ պետական գնումների ոլորտի պաշտոնյաների հետ

<sup>25</sup> ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում, Հոդված 33.1

<sup>26</sup> ՀՀ Նախագահի 2001 թ. հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի անդամներ նշանակելու մասին» ՆՀ-786 հրամանագիր, ՀՀՊՏ 2001.01.31/3(135)

<sup>27</sup> «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2007.04.04/18(542) և ՀՀՊՏ 2011.05.13/27(830)

<sup>28</sup> Համաշխարհային բանկի կողմից հրապարակված «Հայաստանի Հանրապետություն. Կոտակում, մրցակցություն և միակցելիություն» զեկույց, Հուլիս, 2013 թվական, էջ 71

կնքված արձանագրությունները հնարավորություն կտան բացահայտելու և վեր հանելու անբարեխիղճ տենդերային գործելակերպը<sup>29</sup>:

Հանձնաժողովը 2011 թ. տարեկան գործունեության հաշվետվությունում ներկայացրել է, որ առավել հստակեցվել և խստացվել են մրցակցային օրենսդրության խախտումների համար նախկինում սահմանված պատասխանատվության միջոցները՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին, ինչպես նաև սահմանվել են տուգանքների չափերի որոշման համար հիմք հանդիսացող սկզբունքները և չափանիշները<sup>30</sup>, մինչդեռ մենք գտնում ենք, որ այդ փոփոխություններն իրենց հետ բերել են բազմաթիվ սողանքներ՝ թե՛ պատասխանատվության միջոց կիրառելու, թե՛ տուգանքներ նշանակելու լայն ազատության տեսանկյունից: Այդ փոփոխություններում տեղ են գտել տուգանքների նշանակման հսկայական միջակայքեր<sup>31</sup>: Նմանապես, ՀՀ վերահսկիչ պալատը եկել է այն եզրակացության, որ Հանձնաժողովի կողմից տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվող տուգանքի չափը հաշվարկելու հաստատված մեթոդաբանության կամ իրավական որևէ այլ ակտի բացակայությունը տուգանքի նշանակման գործընթացը դարձնում է ռիսկային<sup>32</sup>:

Հանձնաժողովի կողմից 28.10.2014 թ. հրապարակված գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների ցուցակում<sup>33</sup> տեղ են գտել այնպիսի ընկերություններ, որոնք կա՛մ լուծարվել են, կա՛մ դադարեցրել իրենց գործունեությունը (օրինակ՝ առևտրային ցանցերի կազմից կարելի է առանձնացնել «Սթար Դիվայր» ՓԲԸ-ն, «Ֆրեշ» ՍՊԸ-ն): Հրապարակված ցուցակից նմանօրինակ դեպքերը բացառելով՝ Աղյուսակ 1-ում ներկայացրել ենք այն ապրանքային շուկաները (համախմբված տեսքով) և առևտրային ցանցերը, որոնցում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Նշված է նաև ապրանքային շուկաներից յուրաքանչյուրում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների թիվը:

---

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 76 և էջ 78

<sup>30</sup> ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2011 թ. տարեկան գործունեության հաշվետվություն, էջ 2

<sup>31</sup> Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2011.05.13/27(830), Հոդված 25

<sup>32</sup> ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013 թ. մարտի 22-ի «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի աշխատանքների, այդ թվում՝ վարչական վարույթ հարուցելու, իրականացնելու, ինչպես նաև տուգանքների վճարման գործընթացի, օրինականության և արդյունավետության նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը հաստատելու մասին» թիվ 5/10 որոշման հավելված, էջ 5

<sup>33</sup> Ի դեպ այս ցուցակը Հանձնաժողովի կողմից հրապարակված թերևս վերջին ցուցակն է:



Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների ցուցակ (ՀՀ ՏՄՊՊՀ 28.10.2014թ. դրությամբ)<sup>34</sup>

Ապրանքային շուկաների և առևտրային ցանցերի անվանումները	Ապրանքային շուկաների թիվը	Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների թիվը
<b>Ապրանքային շուկաներ, այդ թվում՝</b>	<b>148</b>	<b>119</b>
Պարենային ապրանքային շուկաներ	57	62
Ոչ պարենային ապրանքային շուկաներ	74	46
Դեղորայքի ապրանքային շուկաներ	17	11
<b>Առևտրային ցանցեր, այդ թվում՝</b>	<b>8</b>	<b>42</b>
Պարենային ապրանքների	1	6
Բենզալցակայանների	1	5
Դեղատների	1	9
Սալիկների և սանիտարական տեխնիկայի	1	4
Էլեկտրատեխնիկայի	1	5
Կահույքի իրացման	1	4
Շինանյութերի, ջեռուցման համակարգերի և կահույքի ներմուծման	1	5
Մանրածախ առևտրի	1	4

Հանձնաժողովի կողմից ՀՀ ապրանքային շուկաներում համակենտրոնացման մակարդակի հաշվարկման հիմքում ընկած է շուկայական համակենտրոնացման գործակիցը, որը որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով.

$$CR_n = \sum_{i=1}^n q_i,$$

որտեղ  $CR_n$ -ն ապրանքային շուկայում  $n$  թվով ամենամեծ իրացման ծավալ ունեցող տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման գործակիցն է,  $q_i$ -ն՝  $i$ -րդ տնտեսվարող սուբյեկտի իրացման բաժինն է ապրանքային շուկայում՝ իրացման ամբողջ ծավալի մեջ:

<sup>34</sup> Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների ցուցակի (ՀՀ ՏՄՊՊՀ 28.10.2014 թ. դրությամբ) հիման վրա:

Որպես կանոն, ՀՀ ապրանքային շուկաներում համակենտրոնացման մակարդակը որոշելիս, վերոնշյալ բանաձևը հաշվարկվում է իրացման առավել մեծ բաժին ունեցող 3 տնտեսվարող սուբյեկտների համար ( $CR_3$ ): Համաձայն նշված մեթոդաբանության՝ ապրանքային շուկան ունի համակենտրոնացման բարձր մակարդակ, եթե  $70\% < CR_3 \leq 100\%$ , միջին մակարդակ, եթե  $45\% < CR_3 \leq 70\%$  և ցածր մակարդակ, եթե  $CR_3 \leq 45\%$ :

Ապրանքային շուկաներում 2010 թվականից մինչև 2013 թվականի սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում (վերջին անգամ Հանձնաժողովը հրապարակել է այս ժամանակահատվածի տվյալները) կատարված ուսումնասիրությունների հիմքում դնելով վերոնշյալ գործակցի մեթոդաբանությունը՝ Հանձնաժողովի կողմից առանձնացվել են համակենտրոնացման տարբեր մակարդակներ ունեցող ապրանքային շուկաները, որոնք խմբավորված արտացոլված են Աղյուսակ 2-ում:

## Աղյուսակ 2

### Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված ապրանքային շուկաներ 2010 թվականից մինչև 2013 թվականի սեպտեմբեր<sup>35</sup>

Ապրանքային շուկաներ	Տարի			
	2010	2011	2012	2013 հունվար-սեպտեմբեր
Ապրանքային շուկաների քանակը, այդ թվում՝	56	19	22	12
բարձր համակենտրոնացված	26	16	10	3
միջին համակենտրոնացված	26	3	11	7
ցածր համակենտրոնացված	4	-	1	2

Ուսումնասիրելով Հանձնաժողովի 2001-2014 թթ. տարեկան գործունեության հաշվետվությունները՝ բացահայտել ենք, որ Հանձնաժողովի կողմից որոշ ապրանքային շուկաներում բավականաչափ աշխատանքներ չեն տարվել՝ իրական գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներին բացահայտելու, ինչպես նաև տնտեսվարողներին անձանց խումբ որակելու հարցերում: Ակնհայտ է, որ Հանձնաժողովը կա՛մ թերացել է իր մասնագիտական կարողություններում՝

<sup>35</sup> Աղյուսակում ներառված տվյալները փոխառնված են ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2014 թ. տարեկան գործունեության ծրագրից, էջ 6:

չբացահայտելով ռազմավարական նշանակության ապրանքային շուկաներում հանդես եկող անձանց խմբերին, կա՛մ պարզապես դիտավորյալ չի բացահայտել այդ փաստը՝ նպատակ ունենալով միջազգային կառույցների կամ այլ շահառուների (օրինակ՝ ներդրողների) աչքին տպավորություն ստեղծել, թե իբր այդ շուկաները մրցակցային են՝ քողարկելով իրականությունը: Մի շարք դեպքերում էլ Հանձնաժողովն աչք է փակել տնտեսվարող սուբյեկտների կողմից թույլ տրված իրավախախտումների վրա՝ պատասխանատվության միջոց սահմանելիս չպահպանելով իրավակիրառ միջոցներ:

Ատենախոսության երրորդ **«Մրցակցության և մենաշնորհների պետական կարգավորման բարելավման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»** գլուխը նվիրված է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության բարելավմանը, մրցակցության պաշտպանության բնագավառում Հանձնաժողովի և շահագրգիռ այլ պետական մարմինների միջև համագործակցության, ինչպես նաև բնական մենաշնորհների գործունեության նկատմամբ վերահսկողության կատարելագործման ուղիներին:

Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության բարելավումը հնարավորություն կընձեռի ապահովել ապրանքային շուկաներում բարեխիղճ մրցակցություն՝ կանոնակարգելով տնտեսվարողների միջև «խաղի կանոնները»: Թերևս նշված «խաղի կանոնների» բացակայությամբ էլ պայմանավորված է մեր երկրում ստեղծված ներկայիս իրավիճակը, ինչը դարձել է ժամանակի օրհասական պահանջ պետական կարգավորող մարմինների համար: Տնտեսվարողների մի փոքր խումբ, անբարեխիղճ գործելաոճով իր ձեռքերում կենտրոնացնելով շուկայական ողջ պոտենցիալը, մտացածին կերպով խարսխում է շուկայի բնականոն գործընթացը: Այս համատեքստում էլ կարևոր է դառնում պետության կողմից հակամենաշնորհային կարգավորմանն ուղղված քայլերի ձեռնարկումը, որն իր արտացոլումը գտնում է իրավական ակտերում:

Այս ուղղությամբ մեր կողմից մշակվել են տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կատարելագործման ուղիներ՝ անդրադարձ կատարելով հատկապես այն մասերին, որոնք ունեն երկիմաստություններ, թերարժեք ներկայացումներ և այլ տեսակի իրավական բացեր, որոնք խոչընդոտում են տնտեսական մեխանիզմի բնականոն հունը:

Բացի այդ, մեր կողմից խիստ ուշադրություն է դարձվել պետական օժանդակության տրամադրմանը՝ սահմանելով տրամադրման հստակ նպատակներ, որպեսզի պետական կամ համայնքային բյուջեների միջոցները չվատնվեն ոչ օգտավետ ուղղություններով: Առաջարկվել է պետական օժանդակության տրամադրման վերաբերյալ կարգ, որով սահմանվում է, որ պետական օժանդակության տրամադրումը նախաձեռնող մարմինը մինչև պետական օժանդակություն տրամադրելը, համաձայնություն ստանալու նպատակով

պարտավորվածություն ունենա դիմելու Հանձնաժողով, որն իր ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ պետք է կայացնի որոշում՝ տալով կամ չտալով համաձայնություն պետական օժանդակության տրամադրման մասին, ինչը պետք է լինի վճռորոշ:

Համաշխարհային փորձը վկայում է, որ մրցակցային միջավայրի կարգավորման նպատակով ստեղծված պետական մարմիններն իրենց գործառույթների իրականացման նպատակով սերտ համագործակցության մեջ են այն պետական մարմինների հետ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով շոշափում են այնպիսի ոլորտներ, որոնցում առկա տեղեկատվությունն անհրաժեշտ է՝ «մրցակցության կարգավորման խոռոչները» վերացնելու և իրավախախտումներն ակներև դարձնելու նպատակով: Հանձնաժողովը, մինչ օրս կնքել է համագործակցության մի քանի հուշագրեր ու համաձայնագրեր, չնայած դրանց մի մասը մնացել են թղթի վրա նշված և չեն տեղափոխվել գործնական հարթություն:

Իրականում, հիշյալ համագործակցության հուշագրերի ընդունումն ինքնանպատակ չէ, այլ կոչված է լուծելու մրցակցության պաշտպանության բնագավառում առաջացող խնդիրները: ՀՀ օրենսդրության համաձայն՝ այդպիսի հուշագրերը չունեն իրավական ուժ և իրենցից չեն ենթադրում պարտադիր կատարման ենթակա պահանջներ: Այդ իսկ պատճառով, մեր համոզմամբ, հրամայական անհրաժեշտություն է առաջանում ընդունել միասնական իրավական ակտ (կարծում ենք ՀՀ Նախագահի հրամանագիր), որով կկարգավորվեն Հանձնաժողովի և այլ պետական մարմինների միջև իրավահարաբերությունները՝ կապված մրցակցության պաշտպանության բնագավառում պարտադիր կատարման ենթակա պահանջների հետ: Այսպես.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրվող տեղեկատվությունը ՀՀ ներմուծվող, ՀՀ-ից արտահանվող, ինչպես նաև ՀՀ տարածքում արտադրված, ձեռք բերված և իրացված ապրանքների ծավալների և գների վերաբերյալ՝ ըստ տնտեսվարող սուբյեկտների, հնարավորություն կընձեռի որոշել տնտեսվարող սուբյեկտների շուկայական իշխանության մակարդակը և բացահայտել գերիշխող դիրքի չարաշահումները: ՀՀ կառավարության աշխատակազմի «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից պետական գնումների կատարման անհրաժեշտությունից բխող մրցութային հրավերների կազմման և մրցութային փաթեթների ուսումնասիրությունների անցկացման արդյունքում հայտնաբերված մրցակցային նորմերի խախտումների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը թույլ կտա բացահայտել հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումները, ինչպես նաև

պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունները: ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից պետական կարիքների համար ապրանքների, ծառայությունների և աշխատանքների կողմնորոշիչ գների ու սակագների սահմանման վերաբերյալ տեղեկատվությունը կօժանդակի բացահայտել հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումները: ՀՀ արդարադատության նախարարության «Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի» գործակալության, «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի և ռեեստր վարող այլ կազմակերպությունների կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցության իրավունք տվող փայաբաժինների փոփոխությունների, փայաբաժին վաճառողի ու ձեռք բերողի վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը հնարավորություն կտա բացահայտել տնտեսական համակենտրոնացումները: ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության» կողմից գյուղատնտեսական ապրանքների ծագման, որակի վերահսկողության ստուգման, ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղերի ծագման, դեղաշուկայի դիտարկման, ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի «Շուկայի վերահսկողության պետական տեսչության» կողմից ապրանքների տեխնիկական կանոնակարգերի վերահսկողության ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը թույլ կտա բացահայտել անբարեխիղճ մրցակցության գործողությունը: «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահպանման նկատմամբ վերահսկողության լիազորություններով օժտված պետական մարմինների կողմից անբարեխիղճ գովազդի կամ կանխամտածված կեղծ գովազդի դրսևորումներ հայտնաբերելու վերաբերյալ, իսկ ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի «Մտավոր սեփականության» գործակալության կողմից հեղինակային և հարակից այլ իրավունքների, ինչպես նաև ապրանքային նշանների գրանցված սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը նույնպես կօժանդակի բացահայտել անբարեխիղճ մրցակցության գործողությունը: ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված անձանց մոտ անցկացված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված մրցակցային նորմերի խախտումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը թույլ կտա կանխել մրցակցային օրենսդրության խախտումները:

Ատենախոսության «**Եզրակացությունում**» ձևակերպվել են հիմնական եզրահանգումները, որոնք նվազագույնի կհասցնեն մրցակցային օրենսդրության սողանքները, կօժանդակեն տնտեսվարող սուբյեկտների վարքագծի նկատմամբ օբյեկտիվ վերահսկողություն իրականացնելուն, կապահովեն Հանձնաժողովի արդյունավետ աշխատանքների իրականացումը և որ ամենակարևորն է՝ կնպաստեն նույնիսկ սահմանադրորեն ամրագրված տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորմանը: Այսպես.

1. Նկատի ունենալով, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում հստակ տարանջատված չեն պատասխանատվության միջոցների կիրառման ձևերը, առաջարկվել է սահմանազատում դնել տուգանք նշանակելու և նախազգուշացում տալու միջև՝ հնարավոր բոլոր խախտումների համար:

2. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունից ակներև է, որ տնտեսվարող սուբյեկտների կողմից թույլ տրված իրավախախտումների նկատմամբ կիրառվող տուգանքների սահմանաչափերն ընդգրկում են ահռելի մեծ միջակայքեր, որոնք էլ իրենց հերթին հղի են կոռուպցիոն ռիսկերով: Որպես առկա խնդրի լուծում՝ առաջարկվել է ներդնել տուգանքների կիրառման միասնական համակարգ, որը գերծ է ելակետային ցուցանիշների ընդգրկումն միջակայքերից և տուգանքների նշանակման մեծության համար տարբերակում է դնում խախտում թույլ տված ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև:

3. Միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից իրենց զբաղեցրած դիրքը շարունակաբար չարաշահելու դեպքում, լիազոր մարմնի որոշմամբ տվյալ տնտեսվարող սուբյեկտը պետք է բաժանվի (առանձնացվի)՝ հաշվի առնելով անհրաժեշտ որոշ էական պայմաններ: Մեր երկրում օրենսդրորեն սահմանված է տնտեսվարող սուբյեկտների ապախոչորացման վերաբերյալ դրույթ, սակայն առկա չէ դրա կիրարկման որևէ կարգ: Այս նպատակով մշակվել և առաջարկվել է տնտեսվարող սուբյեկտների հարկադիր բաժանման (առանձնացման) մեխանիզմ:

4. Մերօրյա ժամանակներում հաճախակի են դարձել տնտեսվարող սուբյեկտներին պետական օժանդակություն տրամադրելու դեպքերը (երբեմն խոշոր չափերով), սակայն թե՛ պատկան մարմինների, թե՛ տնտեսվարողների, թե՛ հասարակության կողմից երբևիցե չի բարձրաձայնվել այն մտահոգությունը, թե արդյոք այս օժանդակությունները տեղին են և չեն խարսխում ապրանքային շուկաներում բարեխիղճ մրցակցությունը: Ներկայումս առկա չէ պետական օժանդակության տրամադրումը կանոնակարգող մեխանիզմ, որից ելնելով՝ մեր կողմից առաջարկվել է ներդնել պետական օժանդակության տրամադրման

վերաբերյալ կարգ, որը Հանձնաժողովին վերահսկողության և կարգավորման հնարավորություն կընձեռի պետական մարմինների կողմից տրամադրվող օժանդակությունների նկատմամբ՝ նպատակ ունենալով հավասարակշռել ապրանքային շուկաներում մրցակցության աստիճանը:

5. Հաշվի առնելով, որ մրցակցային նորմերի խախտումները երբեմն չեն հայտնաբերվում լիազոր մարմնի կողմից, քանի որ Հանձնաժողովի աշխատանքների իրականացմանը խոչընդոտում է անհրաժեշտ տեղեկատվության պակասը, ինչը գտնվում է այլ պատկան մարմինների տրամադրության տակ, առաջարկվել է Հանձնաժողովի և պետական մի շարք մարմինների միջև համագործակցության ուղիներ, որոնցում առանձին-առանձին հստակեցվել է, թե ինչպիսի պայմաններում այդ մարմինները պետք է համագործակցեն Հանձնաժողովի հետ, ինչ խնդիր կարող են լուծել և ինչպես՝ նպաստելով մրցակցային դաշտի կարգավորմանը:

6. Քանզի ՀՀ-ում առկա չէ «Բնական մենաշնորհների մասին» օրենք և ոլորտը կարգավորվում է ճյուղային օրենքներով սահմանված բնական մենաշնորհների վերահսկողությանն առնչվող եզակի դրույթներով, որտեղ բացակայում է սակագների հաշվարկման մեթոդաբանությունը՝ ի հակադրություն մի շարք երկրների, ուր «Բնական մենաշնորհների մասին» օրենքում հստակ ամրագրված են սակագների հաշվարկման ելակետային ցուցանիշները, ինչպես նաև բնական մենաշնորհի շուկաները, ապա հանգել ենք այն բանին, որ անհրաժեշտ է սահմանել ՀՀ-ում բնական մենաշնորհի շուկաները և նորմավորել բնական մենաշնորհների սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման համար հիմք հանդիսացող տարրերը: Նշված նպատակով առաջարկվել է նորմավորման համապատասխան մեխանիզմ:

7. Կատարված վերլուծություններից ու համեմատականներից եզրահանգել ենք, որ ՀՀ օրենսդրության մեջ առկա են իրավական բացեր, որոնք խոչընդոտում են մեր երկրի տնտեսական մեխանիզմի բնականոն աշխատանքը: Ելնելով անհրաժեշտությունից՝ առաջարկվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, ինչպես նաև այլ իրավական ակտերի ընդունման, ինչպես նաև գործող ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ նախագծեր:

## **ВАРАЗДАТЯН ТАРОН СИРАКОВИЧ**

### **«ПУТИ ПРЕОДОЛЕНИЯ СОВРЕМЕННЫХ ПРОБЛЕМ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ КОНКУРЕНЦИИ И МОНОПОЛИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ»**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02-«Экономика, управление хозяйством и его сферами».

Защита диссертации состоится 3-го июня, 2016 года в 13:30 часов на заседании специализированного совета 015 по экономике ВАК РА, действующего в Ереванском государственном университете по адресу: 0009, г. Ереван, ул. Абовяна 52.

#### **РЕЗЮМЕ**

Основной целью диссертации является исследование существующих проблем государственного регулирования экономической конкуренции и монополий в Республике Армения и разработка рекомендаций для их решения. Для осуществления представленной цели в диссертации были выявлены и решены следующие задачи:

- Представление эволюции теоретических концепций понятий «Экономическая конкуренция» и «Монополия»,
- Обоснование необходимости регулирования конкуренции и монополий,
- Изучение и сравнительный анализ международного опыта государственного регулирования экономической конкуренции и монополий (в том числе естественных),
- Оценка текущего состояния, касательно защиты экономической конкуренции в Республике Армения,
- Выявление проблем регулирования естественных монополий в Республике Армения,
- Выявление пробелов в законодательстве Республики Армения о защите экономической конкуренции и разработка рекомендаций по их устранению,
- Разработка механизма сотрудничества между заинтересованными государственными органами в сфере защиты экономической конкуренции, а также разработка механизма государственного контроля над монополиями.

Объект изучения диссертации является система защиты экономической конкуренции в Республике Армения, а предмет - комплексные меры, направленные на государственное регулирование конкуренции и монополий.



Основные результаты диссертации, которые претендуют на научную новизну, изложены ниже:

1. Были уточнены меры привлечения к ответственности при выявлении правонарушений хозяйствующими субъектами - а именно штрафы или предупреждения. Также было предложено внедрить единую систему применения штрафных санкций, различных для физических и юридических лиц.
2. Был предложен проект о предоставлении государственной поддержки, который определяет четкие цели предоставления государственной поддержки, а также условия предоставления информации Государственной Комиссии по защите экономической конкуренции Республики Армения стороной, являющейся инициатором государственной поддержки и условия утверждения результатов исследований, проведенными Комиссией.
3. Был разработан механизм сотрудничества между государственным органом, регулирующую защиту конкуренции, и прочими заинтересованными государственными органами.
4. Была обоснована необходимость нормирования элементов расчета тарифов на услуги, оказываемые субъектами естественных монополий, и с этой целью был предложен соответствующий механизм нормирования.
5. Был разработан законопроект о внесении изменений и дополнений в закон Республики Армения «О защите экономической конкуренции», содержащий более, чем 20 статей. Были предложены проекты по принятию иных нормативных актов, а также по изменениям и дополнениям в действующих актах.

Результаты проведенных в диссертации исследований и анализа могут быть полезны для научных сотрудников, аспирантов и магистрантов, проводящих подобные исследования, а также для государственных органов, защищающих экономическую конкуренцию и разрабатывающих экономическую политику.

## **VARAZDATYAN TARON SIRAK**

### **“THE WAYS OF OVERCOMING CURRENT ISSUES OF STATE REGULATION OF ECONOMIC COMPETITION AND MONOPOLIES IN THE REPUBLIC OF ARMENIA”**

The abstract of the dissertation for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Economics in the field of 08.00.02-“Economics, Management of the Economy and its Sectors”.

The defense of the dissertation will take place on June 3, 2016 at 13:30 at the Meeting of Specialized Council 015 of Economics of the Supreme Certifying Commission of the Republic of Armenia acting at Yerevan State University. Address: 52 Abovyan Street, Yerevan, 0009.

#### **ABSTRACT**

The main purpose of the dissertation is to study the existing problems of state regulation of economic competition and monopolies in the Republic of Armenia and develop recommendations for their solution. For the achievement of these purpose problems are revealed and solved in the dissertation as follows:

- Presentation of the evolution of the theoretical concepts “Economic competition” and “Monopoly”,
- Corroboration of necessity of regulation of competition and monopolies,
- Study and comparisons with international experience of state regulation of economic competition and monopolies (including natural),
- The assessment of the current state protection of economic competition in the Republic of Armenia,
- The identification of regulatory problems of natural monopolies in the Republic of Armenia,
- The identification of gaps in the legislation relating to protection of economic competition in the Republic of Armenia and elaboration of recommendations on their elimination,
- The development of cooperation mechanism between concerned state bodies in the field of protection of economic competition, as well as mechanism of state control over monopolies.

The object of the dissertation is the system of protection of economic competition in the Republic of Armenia, and the subject is the complex measures on state regulation of competition and monopolies.

The main results of the dissertation, which can be considered as scientific novelty, are listed below:

1. The form of application of imposition of an offense by economic entities was specified, a fine or a warning, based on which it was proposed to introduce a uniform system of penalties for offenses, differentiating between physical and legal persons.
2. Draft of granting state support was proposed, which sets out clear objectives for the provision of state support, also stipulating the terms of providing information to the State Commission for the Protection of Economic Competition of the Republic of Armenia by the initiating party and confirming the results of its study by the Commission.
3. A cooperation mechanism on competition protection was developed between the regulatory body and other interested state bodies.
4. The need for standardization of elements for calculation of tariffs for services provided by natural monopolies subjects has been justified and a standardization appropriate mechanism was proposed.
5. Draft law on making changes and additions to “Protection of Economic Competition of the Republic of Armenia” was developed containing more than 20 articles. At the same time the adoption of the legal and regulatory acts as well as proposal of changes and additions to the existing acts has been recommended.

The analysis and results performed in the dissertation may be useful for conducting similar researches by scientists, post-graduate students and masters, as well as for state bodies who protect economic competition and develop economic policy.

A handwritten signature in blue ink, appearing to be 'Y. Ghazaryan', written in a cursive style with a long horizontal stroke at the end.